# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**2017թ. մայիսի 10-ին կնքված N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/12 գնման պայմանագրի**

**ք. Երևան** «14» « 12 » **2017թ.**

ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ. Մինասյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Աբրահամյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև 10/05/2017թ. կնքված N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/12 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 և 7.4 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.Կողմերը որոշեցին՝

1.1 ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/12 ծածկագրով Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4-րդ բաժինը խմբագրել, բաժնում ավելացնելով նոր կետ հետևյալ բովանդակությամբ.

«4.1.1 Պայմանագրի գնի 100%-ը՝ 30424590 (երեսուն միլիոն չորս հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր իննսուն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին որպես կանխավճար՝ մինչև 15.12.2017 թվականը բանկային երաշխիք ներկայացնելու պայմանով: Բանկային երաշխիքի գործողության ժամկետը սահմանվում է առնվազն մինչև 01.03.2018 թվականը: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը» :

1.2 Ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ Պայմանագրի թիվ 1 հավելվածի 6-րդ կետում ամրագրված աշխատանքների ավարտը՝ «20.12.2017թ.» թվերը խմբագրել, սահմանելով աշխատանքների ավարտը՝ «19.01.2018թ.» թվերով:

1.3 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (1) մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| **ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության ծառայություն** | **«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ** |
| **ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 13** | **ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 68** |
| **ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն** | **Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Ձեյթուն մ/ճ** |
| **Հ/Հ 900011556355** | **Հ/Հ 163518012543** |
| **ՀՎՀՀ 02505511** | **ՀՎՀՀ 02602449** |
| **Աշխատակազմի ղեկավար՝** | **Գործադիր տնօրեն՝** |
| **Մ. Մինասյան** | **Ա. Աբրահամյան** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |